Հարցին ցՀայս թէ ունիցի՞ն զայլ տեղիս քննութեան, և նոքա ասեն՝ քննել զդողացեալ տեղիս, թերի և այլատարազ չինուածս, կամ հրաման տալ ինքեանց չինել զայնս ըստ առաջին ձեւոյն, և կամ գրեալ ծանուցցեն 'ի Դուռն։ Վերստին գրգռեցաւ բարկութիւն Դատաւորին և սկսաւ գոչել, զայդ ոչ է հրամայեալ Արքայի։ Եկին և ժողովեցան ամենեքեան 'ի դուռն տաճարին. Հայք ասեն. որովհետեւ զամենայն ինչ ըստ հրամանի Արքային կամիք գործել, 'ի հրովարտակի Արքային Սէլիմայ յայտնապէս գրեալ է. 'ի ներքս մեծի դրան վէրին և ստորին կողմն, զորս այժմ Յոյնք և Լատինք հակառակ հրամանին գրաւեալ և զմեզ զրկեալ են իսպառ յաւելածութենէ։ Աղաղակեցին Յոյնք. մինչդեռ Հայք յառաջադոյն սեփհական տեղիս ոչ ունէին, այժմ՝ կամին բովանդակ եկեղեցւոյն տիրել։ Գործակալք և գլխաւորք քաղաքին զայս իրաւունս Հայոց գիտէին, և ստիպէին զԴատաւորն իշխել Յունաց զի լռեսցեն, և թողցեն զայն տեղի։ Յոյնք բարձրացուցին զձայնս և յայտնապէս սկսան խօսիլ ընդդէմ Տէրութեան. բարկացեալ Գործակալաց ստիպէին զԴատաւորն 'ի գործադրութիւն, այլ Նորա թեւարկեալ զՅոյնս, հարցանէր ցայլազգի դռնապանս, թէ ո՞րպէս գիտեն զառաջին սովորութիւնն. և նոքա ասեն՝ զերիս ազգս գիտեմք ասա գլխաւոր՝ և նոցա է առնել չինութիւն, բանալ ըզդուռն այլովքն հանդերձ, բայց Լատինք և Յոյնք ածեն աւել ասա. իբրեւ երկարեցաւ վէճն, Լատինք ոչ կամեցան յետս մնալ 'ի չաբաթէ իւրեանց։ Հայք ասեն. չունիմք դատ այժմ ընդ Լատինս, այլ կամիմք ըստ մտաց հրովարտակին թափել զսեփհական տեղիս մեր 'ի ձեռաց Յունաց. եւ յայս բան սաստկացաւ վէճն 'ի մէջ երկուց ազգաց, Հայոց և Յունաց. և 'ի նեղիլ Հայոց, հաճեցան ունել Լատինք զիւրեանց ամբողջ շաբաթն, և բաժանորդ լինել շաբաթուն Յունաց. հաւանեցան ընդ այս Ժողովն և Դատաւորն իսկ, և ստիպէին զՅոյնս հաւանիլ և վախճան տալ կռուոյն։ Այլ Նոքա իբրեւ 'ի միոյ բերանոյ աղաղակէին՝ չատամք տեղի Հայոց մատնաչափ։ Դատաւորն՝ ահա ասացի, բայց Յոյնք ոչ հաճին. Ոստիկան Կուսակալին ասէ՝ 'ի բաց թողեալ զհրաման Արքային, ունկնդի՞ր լի-